

# Մամլո հաղորդագրություն

## ՀԲԸՄ-ը շնորհավորում է Նիկոլ Փաշինյանին՝ Հայաստանի Հանրապետության նոր վարչապետի պաշտոնում ընտրվելու առթիվ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը շնորհավորում է Նիկոլ Փաշինյանին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում հանգրվանային կարևորություն ունեցող ընտրության առթիվ:

Նա պաշտոնն ստանձնում է երկրում աշխուժացած քաղաքացիական կյանքի, վերանորոգ հույսի ու նոր հեռանկարների համաժողովրդային մթնոլորտում: Կառուցողական բարեփոխումների հնարավորությունը հուսալի է թվում այսօր, երբ Հայաստանը շրջում է կառավարման անցյալի էջը՝ ազգային միասնականության ու բարգավաճման նոր փուլ թևակոխելու տրամադրությամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը գտնվում է ազգային գերակայությունների օրակարգը մշակելու ու պետության բնականոն գործընթացը ղեկավարելու ծանր պատասխանատվության առջև: Լայն տարողություն ունեցող այս հանձնառության ստանձնումը ենթադրում է մնայուն մարտահրավերների դիմագրավման կողքին, Հայաստանի վերածննդից ի վեր, անցնող 27 տարիների ընթացքում իրագործված ձեռքբերումների ամրապնդումը:

ՀԲԸՄ-ն վարչապետ Նիկոլ Փաշինյանին լավագույնն է մաղթում իր բոլոր նախաձեռնություններում: Մենք պատրաստ ենք ժողովրդի կյանքի բարելավմանն ուղղված մեր աշխատանքներով արդյունավետ գործակցություն ցուցաբերել նորընտիր վարչապետին ու նրա կառավարչական կազմին:

Հավատարիմ 112 տարիների իր ազգանվեր առաքելությանը, ՀԲԸՄ-ն շարունակելու է գործել հայրենի կառավարության կողքին ի նպաստ հայ ժողովրդի բարօրությանը Հայաստանում թե՛ սփյուռքում՝ կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ու ըստ անհրաժեշտության՝ մարդասիրական օգնության ծրագրերի միջոցով:

Ինչպես տարբեր առիթներով բազմիցս հայտարարել ենք, ՀԲԸՄ-ն համոզված է, որ կառավարական բոլոր մարմինների, ինչպես նաև Հայ Եկեղեցու սերտ համագործակցությամբ է միայն հնարավոր լավագույնս ծառայել մեր ազգի և ժողովրդի շահերին:

*Հիմնված 1906-ին, Հ.Բ.Ը.Մ.ը ([www.agbu.org](http://www.agbu.org)), աշխարհի մեծագույն ոչ-շահամետ հայկական կազմակերպությունն է: Միության կետրոնը գտնվում է Նյու Յորքում, Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Հ.Բ.Ը.Մ. -ը սատարում է հայեցի ինքնության և ժառանգության պահպանմանը եւ մշակմանը՝ կրթական,*

*մշակութային և մարդասիրական ծրագրերով: Միության գործունեությունները ընդգրկում են տարեկան անվի քան 500,000 հայեր՝ աշխարհի տարածքում:*

---

**Հավելյալ տեղեկությունների համար - *Կապ***

AGBU Press Office

55 East 59<sup>th</sup> Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: [communications@agbu.org](mailto:communications@agbu.org)